361
4-21

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ

Բ. ԹԻՖԼԻՍԻ ՎԱՆԱՑ Ա. ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՕՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

Գ. ՉՔԱՒՈՐ ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ ՕԺԻՏ ՏԱԼՈՒ

Դ. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ՆՊԱԱՏ ԲԱՇԽԵԼՈՒ

ԹԻՖԼԻՍ
ԵԼԵՔՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՍ. 7
1907 (92)

17 MAY 2013
1 MAR 2010
388
1370-ԿԱ
1003
11911

ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԿՐՏԻՉ Ծառայ Քրիստոսի և Անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. Պատուարժան Անդամոց Միայուն Յանձնաժողովոյ կրօնա-պատմական Թանգարանի Վանաց աւագ Եկեղեցւոյ Հայոց Տփխիսայ, կառուցելոյ ի մեծարգոյ պ. Աւետիքայ Բ. Ղուկասեան, հարազատիցդ Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն և օրհնութիւն Հայրապետական։

Ի յայտարար գրութենէ Յանձնաժողովոյդ՝ մատուցելոյ Մեզ յ30-ն նոյեմբերի անցելոյ ամի, հաւատի եղաք, զի բարեպաշտօն պ. Աւետիք Բ. Ղուկասեան ի 20-ն յուլիսի նոյն ամի գրութեամբ յանուն Դորին, որպէս և Մեր, նուիրեալ է ի տարին հինգ հարիւր ռուբլիս առ ի յատկացուցանել մրցանակի հայերէն երկասիրութեանց, զորպիսի գումարն մշտնջենապէս ապահովեալ է

42.796

17 MAY 2013

կտակաւ իւրով և որոյ գործադրութիւն իսկ յանձնեալ է Յանձնաժողովոյդ։ Արդ՝ ի նկատ առեալ Մեր զարժանին գովութեան գնպատակն պ. Նուիրատուին և նախաձեռնողին զայն կարևոր հաստատութիւն և կտակ, կարևոր համարիմք այսու Հայրապետական Կոնդակաւ Մերով որոշել առ այդ բաշխումն մրցանակի զհետևեալ կանոնս ի պահպանութիւն ապագայ ժամանակաց և ի կատարումն, որ են։

Ա.—Աւետիս Ղուկասեանի նուիրաբերութեամբ հաստատուած մրցանակը կը կոչուի «Ղուկասեան մրցանակ» յանուն նուիրաբերողի։

Բ.—Մրցանակը կըտրուի ամեն տարի Ապրիլի 7-ին ս. Կուսի Աւետման տօնին։

Գ.—Ղուկասեան մրցանակի նիւթը պէտք է պատկանի հայ լեզուի, հայ դպրութեան կամ հայ պատմութեան ճիւղերին. այն է՝ հայոց լեզուի և գրականութեան հետազօտութիւն, հին հայ մատենագիրների թարգմանութիւն լուսաբանութիւններով կամ բանասիրական քննադատութիւններով ճոխացրած, ազգային կամ եկեղեցական պատմութեան լուսաբանուած հատուածներ, հայաբնակ գաւառների աշխարհագրական տեղագրութիւն, ազգային գեղարուեստի հետազօտութիւն, հայ օրէնսգիտութեան կամ

կանոնագիտութեան վերաբերեալ տեսութիւններ և այլն։

Դ.—Մրցանակի չեն կարող ներկայացուիլ. 1. օտար լեզուներից թարգմանութիւններ. 2. դասագրքեր. 3. մի անգամ արդէն որևէ ազգային հաստատութիւնից վարձատրուած երկեր. 4. հին մատենագրութեանց պարզ տպագրութիւններ. 5. մրցման ժամանակից երկու տարի առաջ տպագրուած գործեր։

Ե.—Մրցանակի կարող է մասնակցել ամեն անձ, հայ կամ օտարազգի, բացի գրական Յանձնաժողովի անդամներից։

Զ.—Ներկայացուած գործերը պէտք է հայերէն լինին՝ գրաբառ կամ աշխարհաբառ, ձեռագիր կամ տպուած. տպագիրները հնգական. իսկ ձեռագիրները մէկ օրինակ, բայց շատ մաքուր գրուած։

Է.—Ցիշեալ պայմանների համաձայն պատրաստուած երկասիրութիւնները պէտք է մրցանակի թուականից հինգ ամիս առաջ ուղարկուին մրցանակի Յանձնաժողովին, որ քննութեան ենթարկուին. հակառակ դէպքում կըմնան մինչև միւս բաշխումը։

Ը.—Ղուկասեան մրցանակի գործադրութիւնը, նուիրաբերողի ցանկութեամբ, յանձնուած է Թանգարանի Մնայուն Յանձնաժողովին, որ կազ-

մուած է մի եկեղեցական և երեք աշխարհական անդամներից, թեմի Առաջնորդի նախագահութեամբ, և ոչ ուրիշ հոգևորականի լինի նա կառավարիչ կամ նախանդամ Տփխիսում։ Յանձնաժողովի անդամները նշանակուած են ցմահ, իսկ որևէ անդամի մահից յետոյ նորա փոխարէն ընտրուում և նշանակուում է այլը Հայրապետի կոնդակով։

Թ.—Յանձնաժողովը պիտի կատարէ ներկայացուած երկասիրութեանց նախնական քննութիւնը, եթէ մրցման պայմաններին յարմար գըտնէ՝ կըյանձնէ մասնագէտ և կարող անձանց քննութեան, որոնք կարող են լինել թէ Յանձնաժողովի անդամներից և թէ արտաքոյ նոցա, նոցա տեղեկագիրներն ընդունելով՝ Յանձնաժողովը լրացնում է քննութիւնը և վերջնաբար որոշում մրցանակը։

Ժ. Մրցանակի հինգ հարիւր ռուբլին պէտք է ամբողջապէս տալ արժանաւոր երկասիրութեան։

ԺԱ.—Եթէ իւր ժամանակին չներկայացուի որևէ աշխատութիւն և կամ ներկայացուածները մրցանակի արժանի չլինին, մրցանակի գումարը պիտի գործ դնուի նախնեաց ընտիր մատենագրութեանց տպագրութեան վերայ, որպիսի

հրատարակութեան եկամուտը յատկացնում է թանգարանին։

ԺԲ.—Մրցանակի պայմանների մասին պէտք է կանխապէս յայտարարել Ռուսիայի և արտասահմանի լրագրներում, իսկ մրցանակաբաշխութեան հետևանքի մասին յանձնաժողովը հրապարակաւ հաշիւ է տալիս տպագրութեամբ և իւրաքանչիւր տարի զեկուցում է ներկայացնում Թանգարանի հովանաւոր Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին։

Յետ որոշման կանոնաց աւանդեմք սիրեցեալ որդւոցդ, արդի և ապագայ անդամոց Մնայուն Յանձնաժողովոյդ ուշի ուշով և անկեղծ ոգւով կատարել ճշտութեամբ զհաստատեալ կանոնս, որ կատարելապէս համաձայն է նպատակի ազգասէր բարերար Հիմնադրին։

Եւ մեք օրհնելով զՀիմնադիրն թանգարանին զպ. Աւետիսն Բ. Ղուկասեան հանդերձ ընտանեօք և միակ ժառանգաւ, ասեմք «Յիշատակ բարերարին օրհնութեամբ եղիցի»։

Օրհնեալ եղիցին և անդամք Յանձնաժողովոյն. ոքնողք և վաստակողք յայս մեծ գործ և որք առ յապայն գործիչք և պիտանիք հանդիսանան հաստատութեանս։

Մնամք ի սրտէ օրհնող բարերարաց ազգիս

և ցանկացող ընդ յառաջադիմութիւն սիրեցեալ զաւակացս Ս. Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի, կամք Ճամք խոնարհ Աթոռակալ Նորին

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս Հայրապետութեան յամի շնորհաց Փրկչին 1902 ի 24-ն յունուարի և ըստ տոմարիս ՌՅԾԲ ի Հայրապետութեան Մերում Թ. ամի յԱրարատեան Մայր Աթոռս. Էջմիածնի ի Վաղարշապատ. Համար 101.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Վանաց աւագ եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի։

Թանգարանի նպատակն է ժողովել և պահպանել Հայոց ամեն տեսակ եկեղեցական, կրօնա-պատմական հնութիւններ։

Ծանօթ. Թանգարանը հիմնուած է հանգ. Աւետիս Բ. Ղուկասեանի նուիրաբերութեամբ։

Այդ հնութիւններին պատկանում են հետեւեալները.

Ա. Հին գրչագիր մատեաններ, հին տպագրուած գրքեր, վանքերի ու եկեղեցիների վերաբերեալ հրովարտակներ ու վաւերագրեր։

Բ. Գործածութիւնից հանուած եկեղեցական հին անօթներ, սպասներ, զարդեր և զգեստներ։

Գ. Այն բոլոր հնութիւնները, ինչ որ կարելի է ձեռք բերել Հայոց հին վանքերի ու եկեղեցիների աւերակներում։

Վերոյիշեալ իրեղէնները պահպանւում են Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցու գաւթում յատկապէս այդ նպատակի համար կառուցուած թանգարանական շինութեան մէջ։

Թանգարանի գոյքի մշտական հոգացողութիւնը պատկանում է նոյն թանգարանի Մնայուն Յանձնաժողովին, որ բաղկացած է նախագահ՝ Թիֆլիսի թեմական Առաջնորդից և չորս անդամից, որոնք նշանակւում են Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակով ցմահ։

Մնայուն Յանձնաժողովը դիմումներ է անում զանազան հոգևոր հաստատութիւններին՝ ձեռք բերելու եկեղեցական հնութիւններ։

Կարևոր դէպքում Հայոց վանքերում և եկեղեցիներում գտնուած հնութիւնները յանձնում են թանգարանին Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսի թոյլտուութեամբ։

Թանգարանը պահում է իւր համար առանձին մատեան ժապաւինած և վաւերացրած, որի մէջ արձանագրւում են յականէ իրերի անունները, թէ երբ և որտեղից են ձեռք բերուած։

Պէտք է պահել մի առանձին մատեան, որի մէջ մանրամասն նկարագրուած լինի թանգարանի կարևոր իրերը։

Թանգարանի իրերը դասաւորւում են պահարաններում մատենի թուահամարների կարգով։

Յանձնաժողովը ձեռք է բերում զանազան հաստատութիւններում եղած Հայոց կրօնա-պատմական և եկեղեցական իրերի մանրամասն նկարագրութիւնը կամ լուսանկարները։

Թանգարանը բացւում է որոշեալ ժամանակները հասարակութեան համար։

Թանգարանի իրերը չեն տրւում թանգարանից դուրս և ոչ մէկի։

Թանգարանի մատեան անցկացրած որ և է մի գոյք ոչ մի դէպքում չպէտք է թանգարանի սեպհականութիւնից հանել։

Թանգարանը ունի իւր կնիքը։

Յանձնաժողովը գործում է այս հրահանգով, որ հաստատուած է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակով։

Այս կանոնադրութիւնը կարող է ընդարձակուել կամ փոփոխուել Յանձնաժողովի որոշմամբ և միմիայն Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսի թոյլտուութեամբ։

ԿԱՆՈՆՆԵՐ

Չքաւոր Հայ Լուսաւորչական օրիորդներին ամուսնանալիս օժիտ տալու Ա. Բ. Ղուկասեանի յանուն Տփխիսի Վանաց աւագ եկեղեցու Թանգարանի Մնայուն Յանձնաժողովի կտակած վեց հազար ռուբլու տոկոսներից։

1. Իւրաքանչիւր տարի նպաստ է տրւում, հաւասար չափով, երեք հայ Լուսաւորչական չքաւոր օրիորդների օժիտի համար, ամուսնանալու միջոցին, Ղուկասեանի կտակած գումարի տարեկան տոկոսներից։

2. Ամեն տարի, Յանձնաժողովի որոշած ժամանակամիջոցին, Վրաստանի և Իմերէթի Թեմական Առաջնորդը, իսկ առաջնորդական աթոռը թափուր մնացած ժամանակ Կոնսիստորիայն յայտարարում է Տփխիսի հայ Լուսաւորչական եկեղեցիների միաբան քահանաներին, որպէս զի նրանք Յանձնաժողովին տեղեկութիւններ տան, որոշած ժամանակամիջոցում, իրենց ծխական-

ների մէջ եղած ամուսնացող չքաւոր օրիորդների մասին։

3. Խնդրատու օրիորդները կարող են անմիջապէս դիմել Մնայուն Յանձնաժողովին ներկայացնելով պատշաճաւոր չքաւորութեան վկայական իրենց ծխատէր քահանաներից և բարեգործական ընկերութիւններից։

4. Յանձնաժողովը իւրաքանչիւր տարի Ապրիլի 7-ին վիճակով է որոշում խնդրատու ամենաչքաւոր օրիորդներին նպաստ տալը։

5. Վիճակն ընկած չքաւոր օրիորդներին Յանձնաժողովը տեղեկացնում է ծխատէր քահանաների միջոցով կամ անմիջապէս և տալիս է նրանց պատշաճաւոր վկայական։

6. Նպաստը տրւում է պսակադրութեան առաջին կամ երկրորդ օրը։

Ծանօթ. Վիճակն ընկած այն չքաւոր օրիորդները, որոնք չեն ամուսնանում երկու տարուայ ընթացքում, զրկւում են նպաստը ստանալու իրաւունքից. սակայն եթէ նրանք յետոյ ամուսնանում են, նպաստը ստանում են առանց վիճակի։

ԿԱՆՈՆՆԵՐ

Չքաւոր հայ Լուսաւորչական անհատներին եւ ընտանիքներին միանուագ նպաստներ տալու Ա. Բ. Ղուկասեանի յանուն Տփխիսի Վանքեցւոց եկեղեցու Մնայուն Յանձնաժողովի կտակած չորս հազար րուբլու տոկոսներից:

1. Իւրաքանչիւր տարի, Ապրիլի 7-ին, միանուագ նպաստ է տրւում հայ Լուսաւորչական չքաւոր անհատներին և ընտանիքներին Յանձնաժողովի ընտրութեամբ և որոշ քանակութեամբ կտակած գումարի տարեկան տոկոսներից:

2. Ամեն տարի Մարտ ամսի սկզբներում Վրաստանի և Իմերէթի թեմական Առաջնորդը, իսկ առաջնորդական աթոռը թափուր եղած միջոցին Տփխիսի կոնսիստորիայն, յայտարարում է Տփխիս քաղաքի հայոց եկեղեցիների միաբաններին, որպէս զի նրանք Մնայուն Յանձնաժողովին գրաւոր տեղեկութիւններ տան իրենց չքաւոր ծխական անհատների և ընտանիքների մասին մինչև Ապրիլի 1-ը:

3. Չքաւոր խնդրատուները կարող են անմիջապէս դիմել Մնայուն Յանձնաժողովին ներկայացնելով պատշաճաւոր չքաւորութեան վկայական ծխական քահանաներից և բարեգործական ընկերութիւններից:

4. Մնայուն Յանձնաժողովը նպաստները որոշելուց յետոյ իմաց է տալիս խնդրատուներին անմիջապէս կամ ծխական քահանաների միջնորդութեամբ:

5. Նպաստների բաշխումը տեղի է ունենում Մնայուն Յանձնաժողովի ձեռքով Ապրիլի 7-ին Վանքեցւոց եկեղեցու թանգարանում, հանգուցեալ Ա. Ղուկասեանի հոգեհանգստից յետոյ:

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0227197

42. 796